**Արձանագրություն թիվ 6**

2020 թվականի հուլիսի 15-ին, ժամը $15^{00}$ –ին տեղի ունեցավ Շիրակի մարզի Գյումրի համայնքի սոցիալական բնակարանների բաշխման հանձնաժողովի արտահերթ նիստը՝ մասնակցությամբ հանձնաժողովի ներքոհիշյալ անդամների, լրագրողների և համայնքի ղեկավար Սամվել Բալասանյանի:

1. Հանձնաժողովի նախագահ՝ Ռուբեն Սանոյան- Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
2. Քարտուղար՝ Համիկ Եղիազարյան- Գյումրի համայնքի ավագանու անդամ

Անդամներ՝

3. Հրահատ Ստեփանյան- «ԱՌԴԱ» բարեհործական հիմնադրամի գործադիր տնօրեն

4. Գոռ Թորոսյան-«ԱՏՌ» ԵԲԽ ՀԿ նախագահ

5. Սեյրան Մարտիրոսյան- Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի ղեկավար

6. Մկրտիչ Դավթյան – աշխատակազմի համայնքի անշարժ գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

7.Արման Շաբոյան- «Գյումրի կոմունալ ծառայության» ՀԲՀ տնօրենի տեղակալի ժ/պ

8.Հենրիկ Գասպարյան- աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ

9.Վարդգես Սամսենյան-«Գյումրի կոմունալ ծառայության» ՀԲՀ տնօրենի ժ/պ

10.Կարապետ Մխչյան- Գյումրի համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական

11. Հովհաննես Գևորգյան- աշխատակազմի համայնքի անշարժ գույքի կառավարման բաժնի պետի տեղակալ

Բացակայում էին երկուսը՝ Արման Շաբոյանը և Վարդգես Սամսոնյանը

**Օրակարգում**

Բաշխման ենթակա սոցիալական 6 բնակարանները 2020 թվականի հուլիսի 13-ին տեղացած հորդառատ անձրևի և կարկուտի հետևանքով փլուզված և ամբողջությամբ շարքից դուրս եկած ժամանակավոր կացարանների (տնակ) բնակիչներին հատկացնելու մասին Գյումրի համայնքի ղեկավարի առաջարկության քննարկում

(Ինֆ. հանձնաժողովի նախագահ Ռ. Սանոյան)

**Լսեցին**.- Բաշխման ենթակա սոցիալական 6 բնակարանները 2020 թվականի հուլիսի 13-ին տեղացած հորդառատ անձրևի և կարկուտի հետևանքով փլուզված և ամբողջությամբ շարքից դուրս եկած ժամանակավոր կացարանների (տնակ) բնակիչներին հատկացնելու մասին Գյումրի համայքի ղեկավրի առաջարկությունը:

**Արտահայտվեցին,-** Հ.Ստեփանյան, Ռ.Սանոյան, Հ. Եղիազարյան, Ս. Մարտիրոսյան, Հ. Գասպարյան, Գոռ Թորոսյան:

Բաց քվեարկությանը մասնակցած հանձնաժողովի բոլոր անդամները միաձայն՝

**Որոշեցին**

1. Բաշխման ենթական 4 մեկ սենյականոց բնակարանները հատկացնել 2020 թվականի հուլիսի 13-ին տեղացած հորդառատ անձրևի և կարկուտի հետևանքով անօթևան մնացած Գյումրի համայնքի տնակային 104 տարածքի, Գյումրի գետակի մերձակայքում տեղակայված թիվ. 104/059, ժամանակավոր կացարանների բնակիչներին

    1. Մելիքսեթ Սարգսյան- 4 անձ

2. Հանձնաժողովը որոշեց բաշխման ենթակա սոցիալական թվով 2, երկու սենյականոց բնակարանները հատկացնել 2020 թվականի հուլիսի 13-ին տեղացած հորդառատ անձրևի և կարկուտի հետևանքով Գյումրի համայնքի տնակային 104 տարածքի, Գյումրի գետակի մերձակայքում տեղակայված 104/360 և 104/ 813 ժամանակավոր կացարանների անօթևան մնացած ներքոհիշյալ բնակիչներին.

1. Վարդանուշ Իբրաջյան- 5 անձ

2. Ծովինար Հովհաննիսյան- 6 անձ

3. Թույլատրել նաև աշխատակազմի համայքնի անշարժ գույքի կառավարման բաժնին 2020 թվականի 17 հուլիսի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ նիստի հաստատմանը ներկայացնելու մնացած երեք բնակարանների շահառուների ցանկը համաձայն 23 մայիսի 2020 թվականի N34 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի ներկայացրած շահառուների:

Նաև թույլատրել հաստատված երեք շահառուների ցանկի փոփոխություն շահառուների հրաժարվելու դեպքում:

Հանձնաժողովի նախագահ՝ Ռուբեն Սանոյան

Քարտուղար՝ Հասմիկ Եղիազարյան

Հանձնաժողովի անդամ՝ Հրահատ Ստեփանյան

Հանձնաժողովի անդամ՝ Գոռ Թորոսյան

Հանձնաժողովի անդամ՝ Սեյրան Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամ՝ Հովհաննես Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Հենրիկ Գասպարյան

Հանձնաժողովի անդամ՝ Կարապետ Մխչյան

Հանձնաժողովի անդամ՝ Մկրտիչ Դավթյան